Հաստատված է
«Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի
գիտական խորհրդի 2023 թ. դեկտեմբերի 13-ի նիստում
Արձանագրություն No01-12/23
Գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր՝
Ե.Վ.Վարդանյան

ԿԱՐԳ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԼՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ

1.Սույն կարգը սահմանում են Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի (այսուհետ՝ ՃՇՀԱՀ) աշխատողներին գիտահետազոտական աշխատանքի որոշ տեսակների կատարման համար տրամադրվող լրավճարների չափերը և դրանց վճարման կարգն ու պայմանները:

2.Լրավճարները տրամադրվում են սույն կարգի հավելվածի աղյուսակում նշված չափերով՝ հետևյալ աշխատանքների կատարման համար.

1) Որոշակի շտեմարաններում ընդգրկված պարբերականներում և ՃՇՀԱՀ «Journal of Architectural and Engineering Research» պարբերականում հոդվածի հրապարակում, այդ թվում՝ արտասահմանյան գիտակրթական կազմակերպություն ներկայացնող հեղինակի հետ համահեղինակությամբ,

2) Առնվազն 5 տպագրական մամուլով մենագրության հրատարակում,

3) Դոկտորական ատենախոսության պաշտպանություն,

4) ՃՇՀԱՀ-ում գործող մասնագիտական խորհուրդներից որևէ մեկում թեկնածուական և դոկտորական թեզերի ղեկավարում և խորհրդատվություն,

5) Համահամալսարանական գիտական սեմինարների իրականացում:

3.Աղյուսակի 1-5-րդ կետերով սահմանված գումարները վճարվում են ՃՇՀԱՀ այն աշխատողներին, ովքեր տպագրված հոդվածում որպես իրենց աշխատավայր նշել են ՃՇՀԱՀ-ն և հնարավորության դեպքում նաև nuaca.am համացանցային տիրույթում գրանցված իրենց էլեկտրոնային փոստի հասցեն:

4.Scopus շտեմարանում ընդգրկված ամսագրերում հրատարակված հոդվածները, որոնց քառորդը դեռևս հստակեցված չէ, ընդունվում են Q4-ին համարժեք:

5.«Web of Science» Core Collection շտեմարանում ընդգրկված ամսագրերի քառորդները որոշվում են JCR-ի քառորդներին համապատասխան (այն ամսագրերը, որոնց քառորդը դեռ հստակեցված չէ, ընդունվում են Q4-ին համարժեք):

6.Եթե հոդվածի հեղինակը որպես իր աշխատավայր նշել է մեկից ավելի կազմակերպություն, ապա նրան վճարվում է հասանելիք գումարի կեսը:

7.Կոլեկտիվ մենագրության գլխի (ենթագլխի), քարտեզի, արտոնագրի հրատարակումը համարվում է համապատասխան շտեմարանում ընդգրկված հոդվածին

համարժեք:

8.Գիտաժողովի նյութերի (conference paper) հրապարակումը համարվում է համապատասխան շտեմարանում ընդգրկված հոդվածին համարժեք (հաշվարկվում և լրավճարներ վճարվում են միայն Q1 և Q2 քառորդներում գրանցված գիտաժողովի նյութերի համար):

9.Համահամալսարանական սեմինարների թեմաները համաձայնեցվում են ՃՇՀԱՀ գիտատեխնիկական խորհրդի հետ:

10.Սույն կարգի հավելվածի 1-7-րդ կետերով սահմանված աշխատանքների համար լրավճարները տրամադրվում են ՃՇՀԱՀ աշխատակցի դիմումի հիման վրա: Դիմումին կցվում են լրավճարը հիմնավորող փաստաթղթեր կամ տվյալներ:

11.Դիմումին կցված նյութերի հավաստիությունը ստուգվում է ՃՇՀԱՀ գիտության վարչության կողմից, որից հետո ՃՇՀԱՀ ռեկտորին է ներկայացվում աշխատողին լրավճար տրամադրելու մասին հրամանի նախագիծը:

12.Սույն կարգին համապատասխան իրականացված գիտական աշխատանքների հաշվառումը և տեղեկատվության պահպանումն իրականացնում է ՃՇՀԱՀ գիտության վարչությունը:

13.Սույն կարգն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

14.Սույն կարգն ուժի մեջ մտնելուց հետո ուժը կորցրած ճանաչել ՃՇՀԱՀ գիտական խորհրդի 2020թ. հուլիսի 8-ի №01-07/20 նիստի արձանագրությունը՝ ՃՇՀԱՀ աշխատողների, ուսանողների, ասպիրանտների և հայցորդների խրախուսավճարի տրամադրման մասին:

Գիտական քարտուղար՝ Լ.Հ. Լևոնյան

13-ը դեկտեմբերի, 2023 թ.
գիտխորհրդի որոշում № 01-12/23

ՀԱՎԵԼՎԱԾ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի աշխատողների գիտական աշխատանքների համար լրավճարների տրամադրման և հաշվարկման կարգի

Հ/Հ	ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ (ԱՇԽԱՏԱՆՔԻ)ՆԿԱՐԱԳԻՐԸ		ՄԻԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ (D-Ն) (ՀՀ ԴՐԱՄ)	ՄԵԿ ԱՇԽԱՏՈՂԻՆ ՀԱՍԱՆԵԼԻՔԼՐԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ
1.	Հոդվածի տպագրում «Scopus» շտեմարանում ընդգրկված գիտական պարբերականներում համապատասխան քառորդներով:	Q1	600000	D-ն բաժանած ՃՇՀԱՀ աշխատակից համահեղինակների թվին
		Q2	200000	
		Q3	100000	
		Q4	50000	
2.	Հոդվածի տպագրում «Web of Science» Core Collection շտեմարանում ընդգրկված գիտական պարբերականներում համապատասխան քառորդներով:	Q1	600000	D-ն բաժանած ՃՇՀԱՀ աշխատակից համահեղինակների թվին
		Q2	200000	
		Q3	100000	
		Q4	50000	
3.	Հոդվածի տպագրում «Journal of Architectural and Engineering Research» գիտական պարբերականում		30,000	D-ն բաժանած ՃՇՀԱՀ աշխատակից համահեղինակների թվին
4.	Լրացուցիչ՝ սույն Աղյուսակի 1-3 կետերից որևէ մեկի պահանջներինբավարարող հոդվածի տպագրում արտասահմանյան համահեղինակ(ներ)ի հետ		50000	D-ն բաժանած ՃՇՀԱՀ աշխատակից համահեղինակների թվին
5.	Մենագրության հրատարակում (ծավալը առնվազն 5 տպագրական մամուլ և հրատարակված Web of Science գիտատեղեկատվական հարթակի գրքերի հղման ինդեքսի (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում կամ էլ ընդգրկված լինի Scopus շտեմարանի կողմից ինդեքսավորված գրքերի ցանկում)		200000	D-ն բաժանած ՃՇՀԱՀ աշխատակից համահեղինակների թվին
6.	Դոկտորական ատենախոսության պաշտպանություն (ՃՇՀԱՀ հիմնական աշխատողների համար)		300000	D-ն վճարվում է դոկտորական ատենախոսություն պաշտպանող աշխատողին
7.	ՃՇՀԱՀ-ում գործող խորհուրդներից մեկում թեկնածուական կամ դոկտորական թեզ պաշտպանած հայցորդի (ասպիրանտի, դոկտորանտի) ատենախոսության ղեկավարում կամ գիտական խորհրդատվություն (ՃՇՀԱՀ հիմնական աշխատողների համար)		200000	D-ն վճարվում է հայցորդի (ասպիրանտի) ղեկավարին
8.	Համահամալսարանական գիտական սեմինարների իրականացում		60000	D-ն վճարվում է սեմինարը իրականացնողին